# ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

[V] Ընթացիկ հաշվետվություն

[ ] Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն

[ ] Տարեկան հաշվետվություն

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ

---

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)

Բաց բաժնետիրական ընկերություն

---

կազմակերպական - իրավական ձևը

ք.Երևան 0023, Արշակունյաց,12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

---

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 1 05.02. 2009թ.

---

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ **սովորական**

արժեթղթերի քանակը՝ **10.348.896 հատ**

արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝ **1000**

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| Ազատուհի Մակարյան | գլխ.հաշվապահ | | 05.02.09 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| | | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| | | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները վավերացնում եմ (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

| | | | |
|---|---|---|---|
| Գագիկ Կաֆյան | գլխավոր տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Կ.Տ.

Սույն թվականի հունվարի 30 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը.՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 17.12.2008թ. կայացած նիստի արձանագրությունը ( N 4Խ-08):

2. Արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 1Ժ-09, 30.01.09թ.):

3.Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում Ընկերության 2009 - 2010թթ. զարգացման ռազմավարության մասին 2009թ. հունվարի 30 -ին կայացած արտահերթ ժողովում «ԵՈԳ» ԲԲԸ -ն գլխավոր տնօրեն Գ. ԿԱՖՅԱՆԻ ելույթը:

4. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:

Ընկերության ընդհանուր ժողովի հայտարարությունները «Եթեր» N 2 շաբաթաթերթում 08.01.09թ., «Էֆիր» N 2 08.01.09թ. շաբաթաթերթում (ռուսերեն) ներկայացվում է թղթե կրիչով:

## ² ð Ò ² Ü ² ¶ ð àô Â Ú àô Ü 4Ê-08

## ¦ºðºÌ²ÜÆ àêÎºðâ²Î²Ü ¶àðÌ²ð²Ü§ ´´À

## ïÝûñ»ÝÝ»ñÇ ËáñÑñ¹Ç ÝÇëïÇ

**ù. ºñ¨³Ý** **17.12.2008Ã.**

Ü»ñÏ³ »Ý `
¶. ØÏñïãÛ³Ý – ËáñÑñ¹Ç Ý³Ë³·³Ñ
¾. ¶ñÇ·áñÛ³Ý - ËáñÑé¹Ç ³Ý¹³Ù ².¼áõÉ³ÉÛ³Ý - ËáñÑñ¹Ç ³Ý¹³Ù
Â.¸ÇÉ³ÝÛ³Ý - ËáñÑñ¹Ç ³Ý¹³Ù ¶.ÐáíÑ³ÝÝÇëÛ³Ý - ËáñÑñ¹Ç ³Ý¹³Ù

Ðñ³íÇñí³Í »Ý ÀÝÏ»ñáõÃÛ³Ý ·ÉË³íáñ ïÝûñ»Ý ¶.Î³ýÛ³ÝÁ, í»ñëïáõ·áÕ Ñ³ÝÓÝ³ÅáÕáíÇ Ý³Ë³·³Ñ ².ØÏñïãÛ³ÝÁ:
ø³ñïáõÕ³ñ ú.²ÙÇñÛ³Ý

úñ³Ï³ñ·`
1. Ü»ñÏ³ ýÇÝ³Ýë³Ï³Ý Çñ³íÇ×³ÏáõÙ ÀÝÏ»ñáõÃÛ³Ý 2009-2010Ã.Ã. ½³ñ·³óÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Íñ³·ñÇ ùÝÝ³ñÏáõÙÁ ¨ ¹ñ³ Ñ»ï Ï³åí³Í ÀÝÏ»ñáõÃÛ³Ý µ³ÅÝ»ï»ñ»ñÇ ³ñï³Ñ»ñÃ ÅáÕáíÇ Ññ³íÇñÙ³Ý Ñ³ñóÁ:
2. ÀÝÏ»ñáõÃÛ³Ý ³ñï³Ñ»ñÃ ÅáÕáíÇ ûñ³Ï³ñ·Ç ¨ ³ÝóÏ³óÙ³Ý Å³ÙÏ»ïÇ Ñ³ëï³ïáõÙÁ:
3. ÊáñÑñ¹Ç ³Ý¹³ÙÝ»ñÇÝ ÷áËÑ³ïáõóÙ³Ý ·áõÙ³ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý Ñ³ñóÁ:

úñ³Ï³ñ·Ç ³ñ³çÇÝ Ñ³ñóÇ í»ñ³µ»ñÛ³É »ÉáõÛÃ áõÝ»ó³í ·ÉË³íáñ ïÝûñ»Ý ¶.Î³ýÛ³ÝÁ:
Ü³ Ý»ñÏ³Û³óñ»ó Ý»ñÏ³ÛÇë É³ñí³Í ýÇÝ³Ýë³Ï³Ý Çñ³íÇ×³ÏáõÙ ÀÝÏ»ñáõÃÛ³Ý 2009-2010Ã.Ã. ½³ñ·³óÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Íñ³·ñÁ ¨ ³é³ç³ñÏ»ó ³ÛÝ Ý»ñÏ³Û³óÝ»É µ³ÅÝ»ï»ñ»ñÇ ³ñï³Ñ»ñÃ ÅáÕáíÇÝ:
úñ³Ï³ñ·Ç »ñÏñáñ¹ Ñ³ñóÇ í»ñ³µ»ñÛ³É »ÉáõÛÃ áõÝ»ó³í ¾.¶ñÇ·áñÛ³ÝÁ ¨ ³ñ³ç³ñÏ»ó ÀÝÏ»ñáõÃÛ³Ý ³ñï³Ñ»ñÃ ÅáÕáíÁ Ññ³íÇñ»É 2009Ã. ÑáõÝí³ñÇ 30-ÇÝ, ûñ³Ï³ñ·áõÙ ÁÝ¹·ñÏ»É Ý»ñÏ³ ýÇÝ³Ýë³Ï³Ý Çñ³íÇ×³ÏáõÙ ÀÝÏ»ñáõÃÛ³Ý 2009-2010 Ã.Ã. ½³ñ·³óÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Íñ³·ÇñÁ:
úñ³Ï³ñ·Ç »ññáñ¹ Ñ³ñóÇ í»ñ³µ»ñÛ³É »ÉáõÛÃ áõÝ»ó³í ¶.ØÏñïãÛ³ÝÁ, ¨ Ý»ñÏ³Û³óñ»ó ËáñÑñ¹Ç ³Ý¹³ÙÝ»ñÇ ³é³ç³ñÏáõÃÛáõÝÁ ÷áËÑ³ïáõóáõÙ³Ý ·áõÙ³ñÇ í×³ñáõÙÁ ¹³¹³ñ»óÝ»Éáõ í»ñ³µ»ñÛ³É:
àñáß»óÇÝ.
1.Ð³í³ÝáõÃÛáõÝ ï³É Ý»ñÏ³Û³óí³Í ÀÝÏ»ñáõÃÛ³Ý ½³ñ·³óÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Íñ³·ñÇÝ :
2. Ðñ³íÇñ»É ÁÝÏ»ñáõÃÛ³Ý ³ñï³Ñ»ñÃ ÅáÕáíÁ 2009Ã. ÑáõÝí³ñÇ 30 -ÇÝ:
3.Ð³ëï³ï»É ÅáÕáíÇ Ñ»ï¨Û³É ûñ³Ï³ñ·Á.
³) Ý»ñÏ³ ýÇÝ³Ýë³Ï³Ý Çñ³íÇ×³ÏáõÙ ÀÝÏ»ñáõÃÛ³Ý 2009-2010Ã.Ã ½³ñ·³óÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Íñ³·ñÇ ùÝÝ³ñÏáõÙÁ ¨ Ñ³ëï³ïÙ³Ý Ñ³ñóÁ:
4. Ð³ëï³ï»É ËáñÑñ¹Ç ³Ý¹³ÙÝ»ñÇ ³é³ç³ñÏáõÃÛáõÝÁ ÷áËÑ³ïáõóáõÙ³Ý ·áõÙ³ñÇ í×³ñáõÙÁ ¹³¹³ñ»óÝ»É í»ñ³µ»ñÛ³É:
²é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñÁ ¹ñí»óÇÝ ùí»³ñÏáõÃÛ³Ý:
²Ýó³Ý ÙÇ³Ó³ÛÝ:
îÝûñ»ÝÝ»ñÇ ËáñÑñ¹Ç ³Ý¹³ÙÝ»ñÇ ëïáñ³·ñáõÃÛáõÝÝ»ñÁ`

Ü³Ë³·³Ñ ¶.ØÎðîâÚ²Ü

²Ý¹³ÙÝ»ñ ¾.¶ðÆ¶àðÚ²Ü

Â.¸ÆÈ²ÜÚ²Ü

².¼àôÈ²ÈÚ²Ü

¶.ÐàìÐ²ÜÜÆêÚ²Ü

ø³ñïáõÕ³ñ ú.²ØÆðÚ²Ü

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն  N 1ժ -09

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի,
կայացած 2009թ. հունվարի 30 -ին, ժամը 16.00

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ` Ընկերության 10 348 896 տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերից թվով 8.304.127 բաժնետոմսերի սեփականատերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ ( 80,24% )` այդ թվում Ընկերության պետական բաժնեմասի (80%) լիազոր ներկայացուցիչ Գագիկ Մկրտչյանը:

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ միաձայն ընտրվեց Էմիլ Գրիգորյանը: Ժողովի քարտուղար միաձայն ընտրվեց Օ. Ամիրյանը:

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը բաղկացած 3 հոգուց` Արշալույս Ներսիսյան, Հովսեփյան Խանում, Մկրտչյան Մարինե:

Է. Գրիգորյանը նշեց, որ ժողովը արտահերթ է, կապված տնտեսական ճգնաժամի հետ և առկա է խիստ անհրաժեշտություն մշակել Ընկերության գործունեության ռազմավարությունը ճգնաժամի պայմաններում 2009-2010թվականների կտրվածքով: Հենց հաշվի առնելով սույն հանգամանքը արտահերթ ժողովի անցկացման որոշումը ընդունվել էր Ընկերության Խորհրդի նիստում / N 4Խ-08 առ 17.12.2008թ./:

Է. Գրիգորյանը նշեց նաև, որ Խորհրդի նիստից հետո մինչև ժողովը ը ընկած ժամանակահատվածում, ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ. 284-Ա առ 30.12.2008թ. հրամանով` 2008թ. դեկտեմբերի 27-ից ուժը կորցրած է ճանաչվել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին 21.07.2005թ. N 160-Ա հրամանը: Է. Գրիգորյանը նշեց, որ բաժնետերերի ժողովը, որպես «ԵՈԳ» ԲԲ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին, պետք է հիմք ընդունելով վերը նշված հրամանը, որոշում ընդունի պետության կողմից լիազոր ներկայացուցիչների լիազորությունները դադարեցնելու մասին և հաստատի «ԵՈԳ» ԲԲԸ Խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարման դադարեցումը:

Ելնելով վերը շարադրվածից, ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.`

ՕՐԱԿԱՐԳ ` 1. Ներկա ֆինանսական իրավիճակում Ընկերության 2009-2010թթ. զարգացման ռազմավարության ծրագրի քննարկումը և հաստատումը:

2. «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչների լիազորությունները դադարեցնելու և «ԵՈԳ» ԲԲԸ Խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարման դադարեցնելու մասին:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի առաջին հարցով ելույթ ունեցավ «ԵՈԳ» ԲԲ Ընկերության գլխավոր տնօրեն Գ. ԿԱՖՅԱՆԸ:

Իր ելույթում նա ներկայացրեց Ընկերության կողմից մարքեթինգային գործնության, ոսկերչական իրերի նմուշների դիզայնի նախագծման, դրանց պատրաստման տեխնոլոգիայի մշակման, կոնստրուկտորական փաստաթղթերի ստեղծման, արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի պատրաստման, շուկայի ուսումնասիրման, արտադրանքի իրացման, շուկայական կողմնորոշման վերաբերյալ կատարած աշխատանքները և ներկայացրեց 10 կետից բաղկացած ծրագիրը:

Զեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Ծրագիրը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.՝

կողմ՝ - 8.304.127 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց իր լիազորությունները դադարեցնող Խորհրդի նախագահ Գ. Մկրտչյանը: Նա նշեց, որ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ. 284-Ա առ 30.12.2008թ. հրամանի 2008թ. դեկտեմբերի 27-ից ուժը կորցրած է ճանաչվել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչների լիազորությունները: Առաջարկվեց հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ. 284-Ա առ 30.12.2008թ. հրամանը և «ԵՈԳ» ԲԲԸ խորհրդի թիվ. 4Խ-08 արձանագրությունը 2008թ. դեկտեմբերի 27-ից դադարեցնել բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչների լիազորությունները և դադարեցնել «ԵՈԳ» ԲԲԸ Խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարումը:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.՝

կողմ՝ - 8.304.127 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Հաստատվեց միաձայն:

Ժողովի օրակարգը սպառվեց և հայտարարվեց նրա փակումը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1. Ներկա ֆինանսական իրավիճակում Ընկերության 2009-2010թթ. զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատել:

2. 2008թ. դեկտեմբերի 27-ից դադարեցնել բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչների լիազորությունները և դադարեցնել «ԵՈԳ» ԲԲԸ Խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Օ. ԱՄԻՐՅԱՆ

**Զեկույց**

համաշխարհային ֆինանսական ճգնաժամի
պայմաններում Ըկերության 2009 -10թթ. զարգացման
ռազմավարության մասին 2009թ. հունվարի 30-ին կայացած
արտահերթ ժողովում «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ»
ԲԲԸ –Ի Գլխավոր տնօրեն Գագիկ Կաֆյանի ելույթի

Հարգելի գործընկերներ

ժողովի հարգելի մասնակիցներ, տիկնայք և պարոնայք.

Տարին ճգնաժամային է ամբողջ աշխարհի համար, և մենք չենք կարող անմասն մնալ դրանից: Պետք է հիշել, որ պատմականորեն ամեն մի ճգնաժամին հաջորդում է տնտեսական վերածնունդ: Թե ինչքանով մեզ կհաջողվի վերադասավորել մեր ուժերը, օգտվելով իրավիճակից, նոր շուկաներ մտնելու համար, ամրապնդվելու արդեն ունեցած շուկաներում, պաշտպանել մեր արտադրողին, օգնել վաճառողին և վերավաճառողին՝ կախված կլինի ինչպիսի ձեռք բերումներով, կամ կորուստներով դուրս կգա ճգնաժամից մեր ըկերությունը: Ներկայացված զարգացման ծրագիրը իր շեշտադրումներով կարող է հանդիսանալ հիմնարար՝ ճգնաժամին հակազդելու համար: Սա պետք է անել շտապ, ժամանակ չկորցնելով:

Բոլորիս հայտնի է, որ հումքի արժեքը ոսկերչության և ադամանդագործության մեջ հիմնական ծախսային տարրն է ինքնարժեքի ձևավորման գործընթացում: Անհրաժեշտ է ձևավորել ոսկերչական արտադրությունը թանկարժեք մետաղներով ապահովելու խնդիրը:

Առաջարկում ենք.

1. Դիմել ՀՀ կառավարությանը, որ վերջինս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով, ոսկու հանքարդյունաբերողների հետ դառնա հումքի առաջին գնորդը բորսայի համաձայնեցված գներով ավելացված արժեքի հարկի կիրառմամբ՝ հատկապես մետաղական կոնցենտրատի (դոռե-ի համաձուլվածքի) մասը հանրապետությունում պահելու նպատակով: Այդ ոսկին զտարկվում է աֆինաժային ձեռնարկություններում և տրամադրվում է արդյունաբերությանը առանց ավելացված արժեքի հարկի: Վերջինս դառնում է ավելացված արժեքի հարկի այն մասը, որը ՀՀ ֆինանսների նախարարությունը վերադարձնում է այսօր, կամ վերադարձնելու է կառավարության ծրագրային որոշմամբ 2009 - 2010թթ. ընթացքում:

2. Գործնական միջոցառումներ իրագործել պետական պատվերների կատարումը հանրապետության արտադրողների միջոցով կատարելու ուղղությամբ, հատկապես պետական խորհրդանիշեր ունեցող իրերի մասով:

3. Համաշխարհային շուկա մուտք գործելու նպատակով օգտագործել հայկական սփյուռքի հնարավորությունները և հայ քաղաքական կուսակցությունների ազդեցությունը համախմբելու և

ուղղորդելու սփյուռքահայ գործարարներին առաջնահերթության սկզբունքով Հայաստանի գործարարների հետ համագործակցելու: Նույն համատեքստում օգտագործել այդ բաղադրիչները համաշխարհային շուկայում ալմաստային հումքի ձեռքբերման և ադամանդների վաճառքի շուկայում հաստատվելու նպատակով:

4. Դիմել ՀՀ կառավարությանը ԱՊՀ երկրներում արտահանման և ներմուծման ռեժիմների ազատականացման համար միջոցեր ձեռնարկելու ուղղությամբ:

5. Դիմել ՀՀ կառավարությանը միջոցներ ձեռնարկելու արտադրության կարիքների համար ներկրվող մեքենասարքավորումների, դրանց պահեստամասերի և գործիքների համար սահմանի վրա գանձվող վճարումները նվազագույնի հասցնելու նպատակով:

6. Դիմել ՀՀ կառավարությանը դադարեցնելու նվազագույն շահութահարկի 1% պարտադիր վճարի գանձումը և «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ- ում առաջացած 59763,8 հազ. դրամ գերավճարները թույլատրել հաշվանցել հարկային այլ պարտավորությունների դիմաց:

7. Դիմել ՀՀ կառավարությանը, Հայաստանի Հանրապետության տարածքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառության օրենսդրական դաշտի համապատասխանեցումը Եվրոմիության անդամ երկրների օրենսդրությանը, համարել ժամանակավրեպ:

8. Դիմել ՀՀ կառավարությանը ծնավորելու կոմերցիոն բանկերի ռիսկերի ապահովագրման համակարգ ալմաստային հումքի գնման և վաճառքի վարկավորման գործընթացի համար:

9. Դիմել ՀՀ կառավարությանը փոքր և միջին բիզնեսի հարկային, մաքսային և այլ ստուգումների հաճախականությունը դարձնելու ըստ առաջացած պահանջի՝ վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա և հարկային օրենսդրությամբ բացառել վարչարարության հետագա խստացումը:

10. Դիմել ՀՀ կառավարությանը տեղական շուկայում ըկերության ոսկերչական իրերի մրցունակությունը բարձրացնելու և իրացման ծավալները մեծացնելու նպատակով ստեղծել գովազդի ավելի մատչելի մեխանիզմեր, մասնավորապես հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով գովազդը իրականացնել առավել նպաստավոր պայմաններում:

Շնորհակալություն ուշադրության համար:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ν 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր 30.01.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին ..10..... բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.304.127........... բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 80,24% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Ա. Ներսեսյան

Մ. Մկրտչյան

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր 30.01.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.՝ (առկա 8.304.127 ձայների քանակից)

1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության զարգացման ռազմավարության ծրագրի հաստատում:

կողմ - 8.304.127 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատվեց միաձայն:

2. Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ. 284-Ա առ 30.12.2008թ. հրամանի 2008թ. դեկտեմբերի 27-ից ուժը կորցրած ճանաչել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում պետության կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին 21.07.2005թ. N160-Ա հրամանը և Խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարման դադարեցումը համաձայն վերը նշված հրամանի:

կողմ - 8.304.127 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության խորհրդի անդամների փոխհատուցման գումարի վճարման դադարեցումը հաստատվեց միաձայն:

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Մ. Մկրտչյան

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն   N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր արտահերթ 30.01.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 10 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.304.127 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 80,24% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի երկու հարցերը բաժնետերերը հաստատել են միաձայն՝
8.304.127 ձայնով:

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Ա. Ներսեսյան

Մ. Մկրտչյան

Ա. Ներսիսյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության

տնօրենների խորհրդի կողմից
արծանագրության համարը 4խ-08
17.12.08թ.
տնօրենների խորհրդի նախագահ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

О Ր Ա Կ Ա Ր Գ

30 հունվարի 2009թ.

1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության զարգացման ռազմավարության ծրագրի հաստատում:

ՀԱՐՑ 2. Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ.284-Ա առ 30..12.2008թ.
հրամանի 2008թ. դեկտեմբերի 27-ից ուժը կորցրած ճանաչել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում
ետության կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին 21.07.2005թ. N 160-Ա հրամանը և Խորհրդի
անդամների փոխհատուցման գումարի վճարման դադարեցումը համաձայն վերը նշված հրամանի: :

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

| N | Անուն, ազգանուն | Ծննդյան թիվը | Քաղ. | Մասնագիտ. | Պաշտոնը | Սով.բաժնե տոմս. «ԵՈԳ » ԲԲԸ |
|---|---|---|---|---|---|---|
| Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ | | | | | | |
| 1. | Գագիկ Մկրտչյան | 1960 | ՀՀ | տնտեսագետ-մաթեմատիկ | ՀՀ առևտրի և տնտ. զարգ. նախարարութ վարչ. պետ | չունի |
| 2. | Էմիլ Գրիգորյան | 1938 | ՀՀ | ճարտարագետ | Գլխավոր տնօրենի ավագ խորհրդական | 5894 |
| 3. | Թերեզա Դիլանյան | 1956 | ՀՀ | տնտեսագետ | ՀՀ առևտրի և տնտ. զարգ. նախարարութ. վարչ.պետ | չունի |
| 4. | Աշոտ Ջուլայան | 1953 | ՀՀ | տնտեսագետ | Նույն նախարարութ. վարչ.պետի տեղակալ - գլխ.հաշվապահ | չունի |
| 5. | Գարիկ Հովհաննիսյան | 1970 | ՀՀ | ինժեներ-մեխանիկ | Ընկերության արտ. պետ | չունի |

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

------------------------------------------------------------------------------------- 30 հունվարի 2009թ
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ զարգացման ռազմավարության ծրագրի հաստատում :

ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

ՀԱՐՑ 2. Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ.284-Ա առ 30..12.2008թ.
հրամանի 2008թ. դեկտեմբերի 27-ից ուժը կորցրած ճանաչել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովում
պետության կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին 21.07.2005թ. N 160-Ա հրամանը և Խորհրդի անդամների
հատուցման գումարի վճարման դադարեցումը համաձայն վերը նշված հրամանի: :

ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

.................................................................................. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ